ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2 ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 26 ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ, «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 2 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 118 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Բավարարել «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2 հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 5-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115 հոդվածի և 118 հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի 5-րդ մասի հիման վրա ներկայացված միջնորդությունը՝ 2008 թվականի նոյեմբերի 21-ին նշանակված գործի դատաքննությունը հետաձգելու վերաբերյալ, հետաձգել գործի դատաքննությունը և այն սկսել 2008 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը 11.00-ին։

2. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 16-ի ՍԴԱՈ-69 աշխատակարգային որոշման 1-ին կետը՝ գործի դատաքննությունը 2008 թվականի նոյեմբերի 21-ին սկսելու մասով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 նոյեմբերի 2008 թվականի
ՍԴԱՈ-91